



Վազգեն Սարգսյան

Էս ի՞նչ եք անում, տղերք...

Գաղջ մի մթնոլորտ են ստեղծել, որի մեջ հրաշալիորեն սունկերի նման աճեցնում են նորանոր «գեներալներ»: Ու թե այսպես շարունակվի ևս մեկ-երկու ամիս, Հայաստանը, թերևս, վերածվի համատարած շտաբների, ուր զինվորներ չկան, կան «գեներալներ» և «ծառայողական» մեքենաներ... և յուրաքանչյուր «գեներալ» գոռում է «միասնություն» և հանուն միասնության սպառնում է զինաթափել մյուսին: Ու հարցնող էլ չկա, թե ինչքա՞ն գեներ ունենք, որ զինաթափում ենք մեկմեկու...:

Աշխարհն իր ունեցածը թաքցնելով չի պրծնում, մենք մեր չունեցածը ուզում ենք կոխել աշխարհի աչքը: Մոսկովյան թղթակիցը լրջորեն հարցնում էր. «Հայոց 140 հազարանոց բանակը չի՞ պատրաստվում հարձակվել Թուրքիայի վրա»... Չգիտեի՝ միասնության վրա՞ ծիծաղեմ, թե՞ մեր սնապարծության վրա լամ:

Մի բաժակ ջրում փոթորիկներ բարձրացնելու մեր էս տղայականությունը քանդել, տղերք: Մենք, որ մի գույգ երկփողանի հրացանով տարիուկես Արցախու սահման պաշտպանեցինք, ու ոչ ոք այդ մասին բարձրաձայն չխոսեց, չընդունեց, որովհետև արածներս ամենակենսական շնչելու, հաց ուտելու նման բան էր. մեր շնչած օդի համար ումի՞ց էինք հաշիվ պահանջելու, մեզ ի՞նչ պատահեց, ինչո՞ւ հանկարծ չգնահատված հերոսի դիմակ հագանք. «Մենք ազգի համար արյուն ենք թափում, իսկ դուք...»:

Ոչ մի վայրկյան չնստածեք, թե դաշտերում ու գործարաններում աշխատող մեր ախպերները, որ այսօր զինվորական հագուստով ու զենքով քաղաքում չեն

շրջում, օրհասի պահին մեզանից վատ են կռվելու, կամ իրենց արած գործը մերինից քիչ կարևոր է: Կասկած չունենք: Ուտող-խմողներն ու սև մեքենաներով պատվողները... Է, միշտ էլ, բոլոր ժամանակներում էլ այդպես է եղել. յուրաքանչյուր ազգ ունեցել է իր համար արյուն թափողներ և արյուն ծծողներ, ու էն ազգերն են գոյատևել, ում համար արյուն չխնայողները բազում են եղել: Եվ եթե այսօր, այնուամենայնիվ, մենք ենք արյուն չխնայողները, բերեք մեր խաչը սուսուփուս, արժանապատվորեն տանենք: Թե չէ դուրսապրծուկները կուրծք ծեծելով աշխարհին տիրում են, թե չէ՝ գարածներում ու հիվանդանոցներում էլ մեքենա չմնաց... Թե չէ՝ մեր ժողովուրդը սկսել է մեզանից վախենալ, հասկանո՞ւմ եք, թե ուր ենք հասել, տղերք. ՄԵՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՄԵՉԱՆԻՑ ՎԱԽԵՆՈՒՄ Է: Անեկդոտ էլ կա. մայրը լացող երեխային սաստում է՝ սուս, թե չէ ֆիդայիներին կկանչեն... Գիտե՞ք, թե սրա վերջն ինչ է լինելու, հասկանո՞ւմ եք, թե իրավապահ մարմինների միտումնավոր անգործությունն ինչին է ուղղված, ընթանո՞ւմ եք, թե մայիսի 27-ի օրերը ինչ հրաշքով Երևանում պարետային ժամ չնացրին...

Հրաշք չկա, մանրակրկիտ մշակված ծրագիր է. սպասում են՝ մենք իրար միա ուտենք, մեր ու ժողովրդի մեջ հակասությունն այնքան խորանա-խորացնեն, որ Կարմիր բանակի շոնդալից երթը Երևանում դիտվի որպես փրկություն: Ու մայիսի 28-ը չեկած՝ նոյեմբերի 29-ը երկրորդ անգամ պայթի մեր գլխին: Ու մեղավորը մենք ենք լինելու, լավ հիշեք, եթե հաջողվեց մեր վերընթաց քաղաքական պատերազմը վերածել քաղաքացիականի, ու զենք խառնվեց էդ գործին՝ պատմությունն ու ժողովուրդը մեզ չեն ներելու: Մեզ, որ պայքարի ելանք ամենասուրբ ցանկություններով:

Մայիսի 27-ն ընդամենը նախերգանք էր: Հարցնում են, թե ո՞վ էր մեղավոր այդ օրվա համար... Ես էի մեղավոր, որ էդ հրաշալի տղերքին չկարողացա կողքս պահել: Դուք էիք մեղավոր, որ ասում էիք՝ ոչ մի քաղաքական կազմակերպություն իրավունք չունի զինված շոկատ ունենալ: Չէ՛, ճիշտ էիք ասում, զինված ուժերը մեկ կուսակցության ձեռքում կենտրոնացնելու դաժան փորձը մենք արդեն ունենք: Բայց էդ հրաշալի տղերքը մեզանից կտրվելով՝ մնացին բոլորովին անտեր, որովհետև պետական, հայկական գորամիավորումներ չունենք, որովհետև մեր երկրի մեջ իշխանություն չունենք, իր

ասածի, խոսքի տեր ղեկավար չունենք: Ամեն ինչ խառնվել է իրար, երրորդ դասարանի կրթությամբ որևէ դուրսադուր մեկ ավտոմատով ու չորս դանակով կարող է ազգի ճակատագրի հետ կատակներ անել...

Մայիսի 27-ին մենք ճաշակեցինք մեր որբության հերթական դառը-լեղի պտուղները ու ավելի ենք թունավորվելու, եթե դասեր չքաղենք, հիշենք, թե միաժամանակ քանի հրաման էր պատվում Նուբարաշենի սպանդանոցում, մեկս հրամայում էր ճանապարհները փակել, մյուսներս՝ բացել, մեկս հրամայում էր հեռանալ, մեկլիներս՝ դիրքավորվել, սպասել... Է, հետո՞, մենք մեր ձեռքը հո կրակը չե՞նք ընկել...

Առանձին-առանձին բոլորս էլ նույն բանն ենք ասում. հարկավոր է միավորվել, ղեկավարվել մեկ կենտրոնից, բայց հավաքվում ենք իրար գլխի, ու ոչինչ չի ստացվում: Վերջին 3-4 ամիսների ընթացքում ունեցածներս ուժերն ու էներգիան ու նյարդերը ծախսել ենք անձնական հարաբերությունների ճշտման ու «ռազբիրատների» վրա: Բոլորս բոլորիս սկսել ենք կասկածել, տղերք, սա ամենասարսափելին է: Կասկածի ցեցը մեզ ներսից կուտի: Հրեշավոր կասկածն ու անհանդուրժողականությունը սրտներումս՝ վաղը ո՞նց ենք մեկմեկու թիկունք ապահովելու:

Միասնությունից խոսելով՝ հոգնեցինք, Նժդեհ ցիտելով՝ հոգնեցինք, ու բան դուրս չեկավ: Ու այնքան ժամանակ բան դուրս չի գա, մինչև չհասկանանք, որ «ամեն մի ամբիցիա դեպիվացնում է շարժումը», որ մեզանից ոչ մեկը գեներալ ու գորավար չէ, էդ անտեր գործն, ախար, ուսում, փորձ ու տաղանդ է պահանջում, որ ֆիդայական ցարուցրիվ պայքարը կործանարար հետևանքով է հղի, որ մեր միասնությունը, հասկանանք վերջապես, հնարավոր է միայն պետական կառուցվածքում, տվյալ դեպքում՝ Հայաստանի պառլամենտի պաշտպանության խորհրդի հովանու տակ: Այն, ինչի մասին ընդամենը 5-6 ամիս առաջ երազել միայն կարող էինք: Հապաղելու իրավունք չունենք: Շտապենք, քանի դեռ մութ ուժերը մեզ իրար դեմ չեն հանել, քանի դեռ ժողովուրդը, այնուամենայնիվ, հավատում է մեզ:

Ես ասում եմ՝ ցավը տանեմ մեր ժողովրդի, ծով համբերություն ունի, ապրող ու ապրեցնող ժողովուրդ է, արժանի լինենք իրեն:

Ես ասում եմ՝ դավաճանություն է ժողովրդին ներշնչել, թե ինքը փոքր է ու անգոր:
Երեք միլիոն թե երեք հարյուր միլիոն՝ օրհասի պահին պայքարողը շատ-շատ
մեկ միլիոնն է: Իսկ մեկ միլիոն անձնուրաց պայքարող ազգն իր միջից կարող է
հանել: Ապացուցված բան է:

Մի բան է միայն անհրաժեշտ. սնապարծության և արկածախնդրության
փոխարեն՝ լրջմտություն և պատասխանատվություն: Որպեսզի դուրսպրծուկները
կուրծք ծեծելու ասպարեզ չունենան: Որպեսզի ինքնապաշտպանության գործը
չվերածվի ինքնասպանության: Էս գործը պետական մոտեցում է պահանջում և
ենթադրում է պետականություն: Պահը չկորցնենք, հապաղելը
հանցագործություն է, տղերք:

հուլիս 1990 թ., «Օրագիր»